**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
2019Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-18-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարարծքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2019թ. դեկտեմբերի 16-18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Փախստականների հարցերով առաջին գլոբալ ֆորումին մասնակցություն

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Քննարկված հիմնական թեման Փախստականների հարցերով գլոբալ հռչակագրի գործնական իրականացմանն ուղղված ուղիների նախանշումն էր և այս համատեքստում յուրաքանչյուր պետության լավագույն փորձի ուսումնասիրությունն ու նոր հանձնառությունների ստանձնումը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
Այցի ընթացքում ՏԿԵ նախարարը ելույթ ունեցավ գլոբալ ֆորումի լիագումար նիստի ընթացքում (ելույթը կցվում է), որի ժամանակ ներկայացվեցին փախստականության առնչությամբ Հայաստանի հիմնական մարտահրավերները, ինչպես նաև վերջին շրջանում կառավարության նախաձեռնած գործնական լուծումները, մասնավորապես Ադրբեջանից բռնագաղթած և ժամանակավոր կացարաններում բնակվող (ձգձգված փախստականության իրավիճակում գտնվող անձինք) անձանց բնակարանային ապահովման մասով: Շեշտադրվել է նաև Սիրիայից ժամանած փախստականների դրական ներդրումը Հայաստանի զարգացման գործում,

ինչպես նաև մեր երկրում ապաստանի և միջազգային պաշտպանության համակարգի զարգացումը:

Այցի շրջանակներում ՏԿԵ նախարարը հանդիպել է Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի տնօրեն Միխեիլ Շպինդելեգերին, ում հրավիրել է հաջորդ տարվա ընթացքում այցելել Հայաստան:

Պատվիրակության կազմում ընգրկված ՀՀ Միգրացիոն ծառայության պետն էլ հանդիպում է ունեցել Միգրացիայի հարցերով Նիդերլանդների հատուկ բանագնաց Յուստ Կարենբեեկի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հիմնականում վերադարձի և վերաինտեգրմանն առնչվող մի շարք հարցեր:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ֆորումի արդյունքներով հիմնական համաձայնությունը ստանձնած պարտավորությունների կատարումն է:

## 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստանձնած պարտավորությունների պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է սերտ միջգերատեսչական համագործակցություն, ուստի առաջարկում եմ նշված ոլորտում սերտացնել միջգերատեսչական համագործակցությունը:

## 10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

20.12.19թ.